

**«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ**  
**Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների Պայմաններ**

Սույն պայմանները /այսուհետ՝ Պայմաններ/ կարգավորում են, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ /այսուհետ՝ Բանկ/ և «Ֆիզիկական անձի ժամկետային ավանդի ձևակերպման Դիմում-Պայմանագիր» ստորագրող ֆիզիկական անձի միջև իրականացվող Բանկային Ավանդի պայմանագրային հարաբերությունները: «Ֆիզիկական անձի ժամկետային ավանդի ձևակերպման Դիմում-Պայմանագիրը» և սույն Պայմանները միասին կազմում են Ֆիզիկական անձի ժամկետային ավանդի պայմանագիրը /այսուհետ՝ Բանկային ավանդի Պայմանագիր/:

Ժամկետային ավանդին կից Բանկային հաշվի բացման և սպասարկման հետ կապված բոլոր հարաբերությունները կարգավորվում են Բանկում գործող «Ֆիզիկական անձանց բանկային հաշվի բացման և սպասարկման պայմաններով»:

**Ըստ սույն Պայմանների**

«Ավանդատու», «Հաճախորդ», «Դուք», «Ձեր» և «Ձեզ» բառերը վերաբերում են Բանկում Ավանդ ներդրող ֆիզիկական անձանց: «ՎՏԲ-Հայաստան Բանկ», «Բանկ», «Մենք», «Մեր» և «Մեզ» բառերը վերաբերում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը:

**1. Ավանդի ձևակերպման հիմնական պայմաններ և կանոններ**

- 1.1. Մենք ընդունում ենք դրամական միջոցներ /այսուհետ՝ Ավանդ/ և պարտավորվում սույն Պայմաններով և տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմաններով և կարգով վերադարձնել Ձեր կողմից ներդրված Ավանդի գումարը և հասանելիք տոկոսագումարները:
- 1.2. Դուք կարող եք Բանկում ներդնել ժամկետային ավանդ տվյալ պահին Բանկում գործող ժամկետային ավանդների համար սահմանված պայմաններով և տոկոսադրույքներով:
- 1.3. Ավանդատեսակի պայմանները (ներառյալ Ավանդի ժամկետը, տարեկան տոկոսադրույքը, գումարը, արժույթը և այլ հիմնական պայմանները) արտացոլվում են Ձեր կողմից ստորագրվող Դիմում – Պայմանագրում: Ընդ որում, Դիմում – Պայմանագրում նշված տոկոսադրույքը Ավանդի պայմանագրային ժամկետում ենթակա չէ փոփոխման:
- 1.4. Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են տվյալ ավանդատեսակի համար գործող պայմանների համաձայն (ժամկետի սկզբին/ավարտին և այլ կարգով, որը նախատեսված է տվյալ ավանդատեսակի ամփոփագրով):
- 1.5. Ավանդի/ից կարող են թույլատրվել լրացուցիչ մուտքագրումներ և ելքագրումներ համաձայն Բանկում գործող տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմանների:
- 1.6. Բանկը կարող է սահմանել Ավանդի գումարի ներդրման, մուտքագրումների, ելքագրումների նվազագույն և առավելագույն չափ յուրաքանչյուր ավանդատեսակի համար:
- 1.7. Ավանդը Բանկում կարող է ներդրվել ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից համաձայն Բանկում գործող տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմանների:
- 1.8. Ավանդի պայմանագրի կնքման հետ զուգահեռ Ձեզ հետ կարող է կնքվել նաև Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանագիր՝ բացվել Բանկային հաշիվ, որի միջոցով էլ կատարվելու են Ավանդային հաշվին կատարվող մուտքագրումները, համալրումները և ելքագրումները:
- 1.9. Ավանդի գաղտնիությունը երաշխավորվում է ՀՀ օրենսդրությամբ:
- 1.10. Բանկային ավանդի Պայմանագրի և սույն Պայմանների ուժով Բանկը հանդես է գալիս որպես Ավանդատուի հարկային գործակալ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով՝ Ավանդատուի ստացած եկամուտներից վճարման ենթակա հարկային և այլ պարտադիր վճարումների գծով:

**2. Ձեր և Բանկի իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը**

- 2.1. Մենք պարտավորվում ենք բացել և սպասարկել Ձեր Ավանդային հաշիվը, ինչպես նաև Բանկային ավանդի Պայմանագրով սահմանված ժամկետում վճարել Ձեզ Ավանդի գումարը և Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները՝ փոխանցելով այն Ձեր Բանկային հաշվին (եթե առկա չէ Ձեր կողմից տրված այլ հանձնարարական):
- 2.2. Մենք պարտավորվում ենք Ավանդի գումարը վերադարձնել Ձեզ՝ Ձեր իսկ առաջին պահանջով՝ համաձայն Բանկում գործող տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմաններով:
- 2.3. Դուք իրավունք ունեք տնօրինել Ձեր ավանդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.4. Մենք իրավունք ունենք ինքնուրույն օգտագործել Ձեր Ավանդի գումարը:
- 2.5. Դուք իրավունք ունեք Բանկային ավանդի Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ պահանջել և ստանալ Ավանդի գումարը՝ համաձայն Բանկում գործող տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմաններով:
- 2.6. Դուք պարտավորվում եք պահպանել ավանդային գործառնությունների վերաբերյալ Բանկում գործող իրավական ակտերի պահանջները:
- 2.7. Բանկային ավանդի Պայմանագրի Ձեր օրինակը կորցնելու, Ձեր հասցեի փոփոխության, անձը հաստատող փաստաթղթի կորստի կամ փոփոխության դեպքում 10-օրյա ժամկետում Դուք պարտավորվում եք տեղյակ պահել Բանկին:
- 2.8. Ավանդը կամ տոկոսները ստանալիս՝ Դուք պարտավորվում եք ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև լիազորությունները հաստատող փաստաթղթով:
- 2.9. Ձեր կողմից ներդրված ավանդի հետ կապված գործարքների (ձևակերպում, ժամկետից շուտ խզում, մարում, գումարի նվազեցում, ավանդի գրավով վարկի ձևակերպում) մասին տեղեկացված լինելու նպատակով Բանկը կարող է Ձեզ համապատասխան գործարքի վերաբերյալ ամվճար sms հաղորդագրություն ուղարկել՝ Ձեր կողմից Բանկին նախապես տրամադրած բջջային հեռախոսահամարին:

**3. Ավանդի դիմաց տոկոսներ հաշվարկելու և վճարելու կարգը**

- 3.1. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարը՝ պայմանադրված ժամկետին համապատասխան փոխանցվում է Բանկում բացված Ձեր Բանկային հաշվին (եթե առկա չէ Ձեր կողմից տրված այլ հանձնարարական):
- 3.2. Ավանդի դիմաց տոկոսները հաշվեգրվում են սկսած Ավանդի գումարը հաշվին մուտքագրելու հաջորդ օրվանից մինչև Ավանդը վերադարձնելու օրվա նախորդ օրը:
- 3.3. Տոկոսագումարի հաշվարկների ժամանակ հիմք է ընդունվում տարվա փաստացի օրերի քանակը:
- 3.4. Ժամկետից շուտ Ավանդը վերադարձնելու դեպքում տոկոսները վճարվում են տվյալ պահին Բանկում ֆիզիկական անձի բանկային (ցպահանջ ավանդի) հաշվի համար սահմանված տոկոսադրույքով՝ Ավանդից հաշվանցելով արդեն իսկ վճարված տոկոսագումարը (եթե այդպիսիք եղել են), եթե այլ բան նախատեսված չի Բանկում գործող տվյալ ավանդատեսակի համար սահմանված պայմաններով:
- 3.5. Բանկային ավանդի Պայմանագրով նախատեսված ավանդի տարեկան տոկոսադրույքը Բանկային ավանդի Պայմանագրի գործողության ընթացքում միակողմանի փոփոխման ենթակա չէ:

**4. Ավանդային պայմանագրի կնքումը և երկարաձգումը**

4.1. Բանկային ավանդի Պայմանագիրը ձեռք է բերում իրավական ուժ՝ Ավանդի գումարը ավանդային հաշվին մուտքագրելու պահից:

4.2. Բանկային ավանդի Պայմանագիրը կնքվում և կազմվում է 2 բնօրինակից: Ավանդատուին տրամադրվում է Բանկային ավանդի Պայմանագրի 1 բնօրինակ:

4.3. Ավանդը Բանկային ավանդի Պայմանագրով պայմանադրված ժամկետում չպահանջվելու դեպքում Ավանդային պայմանագիրը երկարաձգվում է նույն ժամկետով և արժույթով, երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար գործող պայմաններով, իսկ տարեկան տոկոսադրույքը սահմանվում է երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար Բանկում գործող տոկոսադրույքը, բացառությամբ «Պլատինիում» բանկային ծառայությունների փաթեթի տրամադրման և սպասարկման հիմնական պայմանների վերաբերյալ Համաձայնագրի լուծման դեպքի: Համաձայնագրի լուծման դեպքում Բանկային ավանդի Պայմանագիրը համարվում է երկարաձգված՝ համապատասխան ավանդատեսակի համար նախատեսված պայմաններով: Համապատասխան ավանդատեսակի պայմաններով այլ բան նախատեսված լինելու դեպքում հիմք է ընդունվում այդ պայմանները:

4.4. Ավանդատուի ցանկությամբ Ավանդի ժամկետի ավարտից հետո Ավանդը կարող է չերկարաձգվել, այդ դեպքում Ավանդի գումարը հաշվեգրված տոկոսների հետ միասին փոխանցվում է Ավանդատուի բանկային հաշվին (եթե առկա չէ Ավանդատուի այլ հանձնարարականը):

4.5. Տվյալ ժամկետային ավանդի ներգրավումը Բանկում դադարեցված լինելու դեպքում, Բանկային ավանդի Պայմանագիրը վերածանկերպվում է նույն արժույթով՝ Բանկային (ցպահանջ) հաշվի համար տվյալ պահին Բանկում սահմանված պայմաններով:

4.6. Բանկային ավանդի Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավասու է միակողմանի փոփոխել սույն Պայմանագրի 4.3. կետով նախատեսված պայմանը, նախօրոք, այդ մասին, երկարաձգման ենթակա ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ, գրավոր՝ տեղյակ պահելով Ավանդատուին:

4.7. Ձեր Ավանդը կարող է ժամկետից շուտ դադարեցվել/ Ավանդի պայմանագրով նախատեսված գումարը նվազեցվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և/կամ հարկային մարմինների կողմից ներկայացված բռնագանձման որոշման/հայտի հիման վրա: Ընդ որում՝

4.7.1. Եթե բռնագանձման գումարը փոքր է Ավանդի գումարից, ապա Ձեր Ավանդը (նվազեցված բռնագանձման գումարի չափով ) շարունակում է գործել Ավանդային պայմանագրով նախատեսված պայմաններով և ժամկետով: Տվյալ դեպքում Ավանդի տոկոսագումարները հաշվեգրվում են Ավանդի փաստացի մնացորդի նկատմամբ:

4.7.2. Եթե բռնագանձման գումարը հավասար է Ավանդի գումարին, ապա Ձեր Ավանդային պայմանագիրը լուծվում է և հաշվեգրված տոկոսագումարները փոխանցվում են Ավանդատուի՝ նախապես ընտրված տոկոսագումարների ստացման հաշվեհամարին:

4.7.3. Եթե բռնագանձման գումարը գերազանցում է Ավանդի գումարը, ապա Ձեր Ավանդային պայմանագիրը լուծվում է, իսկ հաշվեգրված տոկոսագումարները բռնագանձվում են մնացած պարտքի չափով:

4.7.4. Այն դեպքում, եթե բռնագանձման արդյունքում Ավանդի փաստացի գումարը փոքր է տվյալ ավանդատեսակի համար Բանկում սահմանված նվազագույն գումարից, ապա Ձեր Ավանդային պայմանագիրը լուծվում է, իսկ հաշվեգրված տոկոսագումարները և Ավանդի գումարի մնացորդը (բռնագանձումից հետո) փոխանցվում են Ավանդատուի՝ նախապես ընտրված համապատասխանաբար տոկոսագումարների ստացման և Ավանդի գումարի վերադարձման հաշվեհամարին/ներին:

**5. Վեճերի լուծման կարգը**

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարածայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում՝ վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաճախորդը հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բոլոր-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

**Տեղեկացում ենք**, որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:

**Հայտարարություն:** Հաշիվը և դրամում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

**Հայտարարություն:** Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Ավանդատուն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):

**Ծանուցում**

**Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին**

Հարգելի Ավանդատու, ուշադրություն: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), գտնվելու վայրը՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Վ.Սարգսյան 6, հեռ.՝ +374 10 58 35 14, ինտերնետային կայք՝ www.adgf.am.

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) սահմանումներին:

**Հատուցման դեպքը**

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

- եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը, կամ
- եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետև՝ անվճարունակ բանկ):
- Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

**Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը**

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

Ուշադրություն: Ձեր նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժնիները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

**Չերաշխավորված բանկային ավանդ**

- Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝
  - i. Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
  - ii. Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
  - iii. Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,
  - iv. Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
  - v. Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
  - vi. Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:
- Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից:

**Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները**

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

**Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝**

- Երաշխավորված ավանդ(այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ),
  - չերաշխավորված ավանդ:
- Ուշադրություն: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:

**6. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի** համաձայն՝ հաճախորդին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտահարկ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե: Ծառայության վերաբերյալ ամբողջական տվյալներին կարող եք ծանոթանալ [www.vtb.am](http://www.vtb.am) կայքում, ինչպես նաև զանգահարելով միասնական տեղեկատվական ծառայություն 87 87 հեռախոսահամարով: